

Կազմող՝ Մ. Գ. Աբրահամյան

Ամեն մի գիտական ամսագիր հեղինակների համար սահմանում է հետազոտական աշխատանքի (բնագրի) ձևավորման իր պահանջները: Այդուհանդերձ, կան որոշ համընդհանուր կանոններ, որոնք կարող են օգտակար լինել հրատարակման ենթակա գիտահետազոտական աշխատանքի սևագիր տարբերակի մշակման համար: Այստեղ կներկայացնենք գիտական շարադրանքի համար կիրառելի և օգտակար որոշ կանոններ, որոնք կուղղորդեն ձեզ ճիշտ ձևավորել բնագրի բաժինները, գտնել ստանդարտ տերմինաբանության, չափման միավորների և այլ անհրաժեշտ ռեսուրսներ, հոդվածում ճիշտ կիրառել, և ձեր աշխատանքը նախապատրաստել հրատարակման:

Գիտահետազոտական աշխատանքի ձևավորման ընդհանուր ակնարկ

Գիտահետազոտական աշխատանքի (գիտական հոդվածի) ձևավորման չորս հիմնական բաղադրիչները հետևյալն են՝

Ներածություն → մեթոդներ → արդյունքներ → քննարկում:

Այլ բաղադրիչները, ներառյալ բովանդակության առաջարկվող ծավալը (էջերի թիվը պայմանական է) ներկայացված են ստորև.

Բաժին	Ծավալ /շարադրանքի երկարություն/	Բաժին	Ծավալ /շարադրանքի երկարություն/
Վերնագիր	1-ին էջ	Քննարկում	3-5 էջ
Ամփոփագիր	1-ին էջ (100-250 բառ)	Եզրակացություն	1 պարբերություն
Հիմնաբառեր	1 st էջ 3-7 բառ	Շնորհակալագիր	1-2 նախադասություն
Ներածություն	1.5-3 էջ	Շահերի բախում /բնօրինակությունը հաստատող հայտարարություն/	1 նախադասություն
Մեթոդներ	2-3 էջ	Հղումներ	10-40 աղբյուր (1-2 էջ)
Արդյունքներ	2-3 էջ	Հավելված/լրացուցիչ տեղեկություն	1-4 հավելված

Հողվածի առաջին էջում անհրաժեշտ է ներկայացնել հողվածի վերնագիրը, հեղինակների անուն-ազգանունները, աշխատավայրը և կոնտակտային տվյալները: Անհրաժեշտ է նշել նաև հեղինակին (նրան, ում հետ գրախոսները կարող են կապ հաստատել), որը սովորաբար կատարվում է տողատակում կամ աստղանիշով (*) նշամբ, և նրա կոնտակտային տվյալները (օրինակ՝ էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը): Օրինակ՝

Արմեն Ա. Սարյան^{1,*} և Մարիա Ս. Սմիթ²

¹ Երևանի Հայբուսակ համալսարան, Բժշկական ֆակուլտետ, Երևան, ՀՀ

² Կալիֆոռնիայի համալսարան, Կենսաբժշկության բաժին, Լոս-Անջելես, ԱՄՆ

[*asaryan@emailaddress.com](mailto:asaryan@emailaddress.com)

ԽՈՐՀՈՒՐ

Եթե վստահ չեք, թե հեղինակների դերերի դասակարգումը ճիշտ է կատարված (այսինքն՝ ով ինչ ներդրում ունի հողվածում), կարող եք օգտվել համացանցում առկա ուղեցույցներից: Օրինակ՝ Գեոֆիզիկայի ամերիկյան միության (American Geophysical Union (AGU)) կողմից հրապարակվող ամսագրերում խորհուրդ է տրվում կիրառել CRediT (Contributor Roles Taxonomy) էլեկտրոնային տաքսոնոմիան, որի օգնությամբ կարող եք դասակարգել հեղինակներին՝ ըստ իրենց ներդրումների:

Ամփոփագիր՝ ի՞նչ եք արել:

Ամփոփագրում պետք է ներկայացնեք խնդրի դրվածքը, հակիրճ նկարագրեք կիրառված մեթոդը, հիմնական վերջնարդյունքները և եզրակացությունը:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Ամփոփագրում հղումներ մի՛ կատարեք:
- Խուսափեք ամփոփագրում հապավումներից և կրճատ գրված բառերից, քանի որ ընթերցողը կարող է ծանոթ չլինել դրանց: Փոխարենը օգտագործեք բառերի կամ տերմինների ամբողջական տարբերակները:

Ամփոփագրի տեսակները

- ***Տեղեկատվական***

Տեղեկատվական ամփոփագիրը, որը կոչվում է նաև ամբողջական ամփոփագիր, հողվածի բովանդակության համառոտ բնութագիրն է, որը ներառում է բովանդակության ընդհանուր նկարագիրը, հետազոտության նպատակը, մեթոդաբանությունը, արդյունքները և եզրակացությունը: Տեղեկատվական ամփոփագիրը սովորաբար ներառում է 100-250 բառ և ամփոփ ներկայացնում է աշխատանքի կառուցվածքը, դրանում քննարկվող հիմնական հարցերը և առանցքային դրույթները: Վերջերս առաջարկվում է նաև գիտական հակիրճ զեկույցների ձևաչափը, որը նման է տեղեկատվական ամփոփագրի ձևաչափին: Տեղեկատվական ամփոփագրերը կարող են համարվել որպես ինքնուրույն փաստաթղթեր:

- **Նկարագրական**

Նկարագրական ամփոփագիրը, որը կոչվում է նաև սահմանափակ կամ ինդիկատիվ ամփոփագիր, ներառում է հետազոտության ընդհանուր նկարագիրը՝ առանց դրա էության մանրամասն նկարագրության: Այն մեկ պարբերության ձևաչափով բովանդակության շարադրանք է:

Հիմնաբառեր

Ամփոփագրից հետո անհրաժեշտ է ավելացնել այն առանցքային տերմինները, որոնք կօգնեն այլոց տեղորոշել ձեր հետազոտությունը: Օրինակ՝ որպես սույն աշխատանքի *հիմնաբառեր կարող են ծառայել՝* Ֆհոդածի ձևավորում, գիտական արդյունքներ, մեթոդ, շարադրանք» արտահայտությունները:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Ստուգեք պարբերականի պահանջը՝ արդյո՞ք «Հիմնաբառեր»-ը պետք է լինեն շեղատառ, և արդյո՞ք յուրաքանչյուր տերմին պետք է գրված լինի մեծատառով:

- Պարզեք հիմնաբառերի միջև կետադրությունը (ստորակետներ, վերջակետներ, թե կետ-ստորակետներ և այլն):

Ներածություն. ի՞նչ են արել ուրիշները, ի՞նչ եք պատրաստվում անել դուք, և Ինչու՞:


Ներածությունն ընթերցողի մոտ ստեղծում ձեր հոդվածի վերաբերյալ առաջին տպավորությունը, հետևաբար այն պետք է լինի պարզ ու ինֆորմատիվ: Ներկայացրեք նախնական տեղեկություն խնդրո առկա հարցի մասին՝ ըստ անհրաժեշտության կատարելով հղումներ: Ներկայացրեք տվյալ ոլորտի նոր զարգացումները, և թե ինչով է հավակնում ձեր հետազոտությունը լրացնել ոլորտի ուսումնասիրություններում առկա բացը:

Լավ շարադրված ներածությունը պետք է պատասխանի հետևյալ հարցադրումներին՝

- ո՞րն է լուծման ենթակա խնդրի դրվածքը,
- կա՞ն առաջադրված խնդրի լուծումներ,
- ո՞րոնք են դրանցից առավել հաջողվածները,
- ո՞րն է/որոնք են դրանցում հիմնական բացը/երը,
- ի՞նչ նպատակ եք հետապնդում (ի՞նչ բացեր եք նախատեսում լրացնել):

ԽՈՐՀՈՒՐԴ

- Շարադրեք, ընդհանուրից անցում կատարելով մասնավորին, սակայն մի՛ ընդգրկեք չափազանց լայն շրջանակի հարցեր, որոնք անմիջական առնչում չունեն քննարկվող նյութի հետ:



Ներածության շարադրանքի ուրվագիծ

Մեթոդներ. ինչպե՞ս եք իրականացրել հետազոտությունը:

Այս բաժնում հարկ է հստակ նկարագրել, թե *ինչ մեթոդներ* եք կիրառել հետազոտությունը կատարելիս: Ներկայացրեք հետազոտության փուլերը կամ գործընթացները տրամաբանական հաջորդականությամբ (այսինքն՝ այն հերթականությամբ, որով կատարել եք), որպեսզի մյուս հետազոտողները կարողանան վերարտադրել ձեր հետազոտության արդյունքները: Նշեք, թե ինչ մեթոդներ եք կիրառել հետազոտությունն իրականացնելիս, սակայն առավել մանրամասն նկարագրեք ձեր կողմից մշակված նոր մոտեցումները բուն հետազոտության գործընթացում:

Հետազոտության մեթոդները թվարկեք այն հերթականությամբ, որով կատարել եք հետազոտությունը, մասնավորապես՝ նկարագրեք՝

1. ինդրի լուծման ձեր տեսլականը,
2. փորձարարական մեթոդները, ներառյալ նմուշների ընտրությունը կամ մշակումը, վերլուծական մեթոդները...,
3. կատարված փորձերը՝ համապատասխան արդյունքերի ներկայացմամբ /աղյուսակներ, գրաֆիկներ.../,
4. արդյունքների մշակման համար կիրառված վիճակագրական մեթոդները (օրինակ՝ ներառյալ վստահության միջակայքը):

Այս բաժնում խուսափեք մեկնաբանություններից և քննարկումներից /դատարածված սխալ է/:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Նշեք այն հատուկ սարքերը, որոնք կիրառել եք հետազոտության ընթացքում՝ փակագծերում նշելով դրանց մշակողի անունը և վայրը:
- Հետևողական եղեք ներկայացվող տեղեկատվության հարցում (կոնկրետ իրավիճակ, քանակություն, ջերմաստիճան, պրոցեսների թափ, տևողություն):

Արդյունքներ. ի՞նչ բացահայտեցիք:

Այս բաժնում է անհրաժեշտ ներկայացնել ձեր հետազոտության փաստական արդյունքները: Ներկայացրեք՝ *ինչ* եք փաստացի ստացել, և շեշտադրեք ձեր հետազոտության *հիմնական բացահայտումները*: Անհրաժեշտություն չկա ներկայացնելու չափազանց շատ մանրամասներ, եթե հատկապես ներկայացնում եք աղյուսակներ ու գծապատկերներ: Այս բաժինը շարադրելիս օգտագործեք բառերի նվազագույն քանակ՝ անհրաժեշտ տվյալները ներկայացնելու համար:

Տվյալները ներկայացնելիս կարևոր է մատուցման հաջորդականությունը, որը հստակ ցույց տա ստացված նյութը, և այն դարձնի դյուրըմբռնելի: Ընդհանուր առմամբ, այդ հաջորդականությունը պետք է լինի այնպես, ինչպես ներկայացվել է Տմեթոդներ» բաժնում:

Կարևոր է, որ *այս բաժնում պետք չէ կատարել հղումներ*. այստեղ դուք ներկայացնում եք *ձեր* արդյունքները, հետևապես այլ հեղինակներին հղում կատարելը ավելորդ է:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Օգտագործեք հավելվածներ, եթե ներկայացվող տվյալները մեծածավալ են:
- Օգտագործեք ենթավերնագրեր՝ ընթերցումը դյուրին և ընկալելի դարձնելու համար:

Քննարկում. ինչի՞ մասին են խոսում ստացված փաստերը:


Այս բաժնում դուք ընթերցողի համար ընդհանուր առմամբ լուսաբանում եք ձեր բացահայտումները՝ կապված կատարված հետազոտության և օգտագործված գրականության հետ: Ներկայացրեք ձեր ընդհանրական եզրահանգումները, ներառյալ հետազոտության ուժեղ ու թույլ կողմերը, ինչպես նաև ձեր արդյունքների մեկնաբանման վերաբերյալ հավանական վարկածները: Հիմնավորեք վարկածը և/կամ հետազոտության շրջանակներում ստացվող եզրահանգումը, որի մասին նշել եք ներածության բաժնում:

Այս բաժնում անհրաժեշտ է ձեր հետազոտության արդյունքները համեմատել գրականության մեջ հայտնի (ներածության մեջ ներառված հղումներում առկա) արդյունքների հետ: Երբեք մի՛ անտեսեք ձեր հետազոտության արդյունքներին չհամապատասխանող տեսակետները, այլ հակադարձեք դրանց՝ ընթերցողին համոզելու, որ ճիշտը դուք եք, կամ որ ձեր հետազոտության արդյունքներն ավելի ճշմարտացի են:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

1. խուսափեք այնպիսի պնդումներից, որոնք չեն կարող հիմնավորվել ձեր ստացած արդյունքներով:

2. խուսափեք ոչ հստակ արտահայտություններից, ինչպիսիք են՝ ավելի բարձր կամ ցածր, շատ մեծ կամ փոքր..., մեծ կամ նվազ թափ...: Քանակական բնութագրերը միշտ ավելի նախընտրելի են (օրինակ՝ 35°C, 0.5%, p<0.001):



3. Խուսափեք նոր տերմինների կամ գաղափարների անհարկի ներմուծումներից. Դրանք հազիվ թե նպաստեն ներածության մեջ ձեր հանձն առած արդյունքների հիմնավորմանը:

4. Կարելի է կատարել ենթադրություններ՝ ստացված արդյունքների հնարավոր մեկնաբանությունների վերաբերյալ: Լավ մեկնաբանություններ կատարելու համար հաշվի առեք հետևյալ հարցադրումները.

- ստացված փաստերը ինչպե՞ս են առնչվում փաստացի հիմնախնդիրներին, որոնց մասին շեշտադրվել է ներածության բաժնում,
- տվյալներն օժանդակո՞ւմ են ձեր առաջադրած վարկածի ապացույցին,
- ձեր հետազոտության արդյունքները համահունչ են այլ հետազոտողների կողմից ներկայացված արդյունքներին,
- քննարկեք թույլ կողմերը և անհամապատասխանությունները. եթե դուք ստացել եք չնախատեսված արդյունքներ, փորձեք բացատրել՝ ինչու,
- արդյո՞ք կան հետազոտության արդյունքները մեկնաբանելու այլ մոտեցումներ,
- ի՞նչ հետագա հետազոտության կարիք կլինի ձեր առաջադրած հարցերին սպառիչ պատասխանելու համար,
- բացատրեք՝ ինչու է կայանում ձեր աշխատանքի նորույթը՝ խուսափելով չափազանցություններից:

Եզրակացություն

Սա երբեմն տրվում է քննարկման բաժնի վերջին պարբերության մեջ: Բացատրեք, թե ինչպես է ձեր հետազոտությունը նպաստում դիտարկվող խնդրի լուծմանը, և նշեք նրա զարգացման հետագա ուղիները: Այս հատվածը կարճ շարադրեք:

Շնորհակալագիր

Գրեք հակիրճ պարբերություն՝ երախտագիտություն հայտնելով ձեր հետազոտությունը ֆինանսավորած կառույցին (օրինակ՝ կրթաթոշակով կամ դրամաշնորհով

կատարված հետազոտության դեպքում) կամ անհատ(ներ)ին, ով(քեր) աջակցել է(են) ձեր հոդվածի բնագրի մշակմանը (օրինակ՝ տեխնիկական հարցերով խորհրդատուներ կամ խմբագիրներ):

Շահերի բախում/ բնօրինակ լինելը հաստատող հայտարարություն/

Որոշ ամսագրեր պահանջում են գրել հայտարարություն, որով հեղինակը հավաստում է իր աշխատանքի բնօրինակությունը և շահերի բախման բացառումը: Այս հատվածում գրվում է մեկ կամ երկու նախադասություն:

Հղումներ

Այս բաժնում թվարկվում է ձեր հետազոտության մեջ հղում կատարված յուրաքանչյուր աղբյուրի մասին տեղեկությունը (այսինքն՝ հեղինակի անուն-ազգանունը, աշխատության հրատարակման թիվը, աշխատության վերնագիրը, ամսագրի/գրքի վերնագիրը, հրատարակչությունը և հրատարակման վայրը): Հղումների ցանկը կարելի է դասակարգել ըստ այբբենական կարգի (հեղինակ, տարեթիվ) կամ ըստ այն հերթականության, որով աղբյուրները ներկայացված են հոդվածում (համարակալված հղումներ՝ [1,3] կամ [21]): Հետևեք հղման ոճերի ուղեցույցին. եթե առկա չեն ուղենիշներ, ընտրեք հղման մի ձև և **հետևողականորեն պահպանեք** այն:

ԽՈՐՀՈՒՐԴ

- Օգտագործեք EndNote, Mendeley, Zotero, RefWorks կամ հղումների դասակարգման այլ համակարգեր՝ տեղեկատվական պաշար ստեղծելու, պահպանելու և օգտագործելու համար:

Հավելված/լրացուցիչ տեղեկություն

Այս (ոչ պարտադիր) բաժնում կարող եք ներկայացնել ոչ էական տեղեկություն, որը հստակեցնում է որևէ խնդիր՝ առանց ծանրաբեռնելու հոդվածի հիմնական բովանդակությունը: Այսինքն՝ եթե առկա տվյալները չափազանց մեծածավալ են (համեմատաբար) հակիրճ հետազոտական աշխատանքում ներկայացնելու համար, ապա անհրաժեշտ է երկրորդական տվյալները տեղափոխել այս բաժին:

ԽՈՐՀՈՒՐԴ

- Հիշեք, որ այս բաժինը հրատարակված աշխատանքներին բնորոշ չէ: Նախքան բնագիրն ուղարկելը ստուգեք՝ արդյո՞ք տվյալ ամսագիրը թույլ տալիս է ներկայացնել հավելվածներ, և նրանում մի՞ ընդգրկեք կարևոր տեղեկություն:

ԲՆԱԳՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Ստորև ներկայացվող բաժիններում ցույց է տրվում, թե ինչպես պետք է ներկայացնել տերմինաբանությունը, հավասարումները, աղյուսակներն ու գծապատկերները, չափումները և վիճակագրական տվյալները՝ գիտական շարադրանքին առաջադրվող պահանջներին համապատասխանելու համար:

Տերմինաբանություն

Հետևողական եղեք տերմինների օգտագործման հարցում: Առհասարակ, բառի հակիրճ տարբերակը կարելի է ներկայացնել այդ բառի ամբողջական տարբերակը նշելուց հետո՝

- տերմինների ամբողջական տարբերակներ՝ ի հակադրում հապավումների (օրինակ՝ deoxyribonucleic acid՝ DNA –ի փոխարեն),

- օգտագործեք հունարեն տառերի անգլերեն անվանումները (օրինակ՝ alpha հունարեն՝ α –ի փոխարեն),

- տեսակների լիարժեք անուններ՝ ի հակադրում կրճատ տարբերակների (օրինակ՝ ստաֆիլոկոկոս աուրեոս, հակիրճ տարբերակը՝ աուրեոս (*Staphylococcus aureus* – փոխանակ *S. aureus*)),

- գեների դասակարգման դեպքում՝ օգտագործեք հետևյալ համակարգերը՝ Gene Cards, The Mouse Genome Informatics Database, և/կամ genenames.org,

- քիմիայի ոլորտում անվանակարգման դեպքում՝ հղում կատարեք International Union of Pure and Applied Chemistry -ի կողմից հրատարակված «Քիմիայի ոլորտի տերմինարան» Ոսկե գրքին (Compendium of Chemical Terminology»-the Gold Book) և Բիոքիմիական անվանակարգի հարցերով զբաղվող հանձնախմբին (IUPAC–IUB),

- ծովային տեսակների անվանումների դեպքում՝ օգտագործեք Ծովային կենսատեսակների համաշխարհային ռեգիստրը (WoRMS: World Register of Marine Species) կամ Ծովային կենսատեսակների եվրոպական ռեգիստրը (ERMS: European Register of Marine Species):

Գիտական տերմինները պետք է շեղատառ ներկայացվեն: Հետևեք հետևյալ խորհուրդներին՝

- տեսակների անունները, որոնք սովորաբար գրվում են հունարեն կամ լատիներեն, շեղատառ են ներկայացվում (օրինակ՝ ստաֆիլոկոկոս աուրեոս (*Staphylococcus aureus*)),

- **գեները գրվում են շեղատառ, պրոտեինները՝ ոչ:**

Հավասարումներ

- Անկախ նրանից՝ հոդվածը մաթեմատիկական է թե տեխնիկական, հավասարումները պետք է ներկայացվեն ընդունված ձևաչափով: Ստորև ներկայացվում են հաշվարկների վերաբերյալ մի քանի խորհուրդներ.

- տեքստում ներկայացված յուրաքանչյուր հավասարում համարակալեք՝ թիվը ներառելով փակագծերի մեջ, օրինակ՝

$$X + Y = Z \quad (1)$$

- Ստուգեք՝ արդյոք տվյալ ամսագրի պահանջների՞ց է մեծատառերով գրել Equation բառը, թե հավասարման թիվը գրել փակագծերում՝

In Equation 1, թե In Eq (1), *X* represents կամ In equation (1), *X* represents...

- Անհրաժեշտ է *փոփոխականները գրել շեղատառերով*:

Հավասարումները մուտքագրելու համար օգտագործեք Microsoft Word-ի Math Type կամ Equation Editor գործիքը, բայց տեքստում առանձին փոփոխականներ կամ մաթեմատիկական նիշեր (օրինակ՝ x , \geq , \pm) օգտագործելիս օգտվեք Unicode characters նիշերից: Ի լրումն նշվածի՝ հաշվի առեք նաև հետևյալը.

- մաթեմատիկական հավասարումները պահպանեք որպես խմբագրվող տեքստ և ոչ թե որպես նկար՝ նախքան հոդվածի հրատարակումն անհրաժեշտ փոփոխությունների կատարումը հնարավոր դարձնելու նպատակով:

Աղյուսակներ և գծապատկերներ

Աղյուսակներ և գծապատկերներ ներկայացնելիս հետևեք հետևյալ կանոններին.

- մեծատառերով գրեք աղյուսակների ու գծապատկերների վերնագրերը, երբ դրանց հղում էք կատարում տեքստում (օրինակ՝ «տես "see Table 3"; "in Figure 4")
- աղյուսակների դեպքում՝ ուշադիր եղեք վերնագրերի գլխատառերին (օրինակ՝ Յուրաքանչյուր Բառ Մեծատառ Գրել, կամ՝ Մեծատառ գրել առաջին բառը),
- գծապատկերների դեպքում՝ ուշադիր եղեք գծապատկերների վերնագրերի կետադրությանը, շեղատառերին և մեծատառերին, օրինակ՝ հետևյալ երկու հակադիր տարբերակները՝

Figure 1. Classification of author roles և Figure 2: taxonomy of keywords

Չափումներ

Չնայած յուրաքանչյուր ամսագրի՝ բնագրի ձևավորման ուղենիշներին վերաբերող պահանջները կարող են որոշ չափով տարբերվել, այդուհանդերձ, չափման միավորների ոսկե միջինը Միավորների միջազգային համակարգն է (International System of Units (SI)):

ԽՈՐՀՈՒՐԴ.

- դրրեք բացատներ չափման միավորներից առաջ, օրինակ՝ 2.5 մլ և ոչ թե 2.5մլ:
- եղեք հետևողական չափման միավորի հարցում, օրինակ՝ 3 ժամ կամ 3 ժ.

Վիճակագրական տվյալներ

Երբ վիճակագրական տվյալներ էք ներկայացնում, դրանք պետք է բավարար տեղեկություն պարունակեն ներկայացվող տվյալների փոխհարաբերությունները ճշգրտորեն ցույց տալու համար: Գրախոսի համար ոչինչ այնքան հիասթափեցնող չէ, որքան առանց հստակ սահմանված որևէ փոփոխականանի վերաբերյալ անհստակ նախադասությունների առկայությունը:

Հոդվածում վիճակագրական տվյալների ներկայացման կանոններ

- Նշեք օգտագործված վիճակագրական թեստերը բոլոր համապատասխան պարամետրերով:
- Օգտագործեք միջին և ստանդարտ շեղումները նորմալ բաշխում ունեցող տվյալները ներկայացնելու համար:
- Աղճատված տվյալների ներկայացման համար օգտագործեք մեդիանը և միջտոկոսիլային միջակայքերը:
- Թվերի դեպքում՝ օգտագործեք երկու իմաստալից թվանշաններ, եթե ավելի մեծ ճշգրտության անհրաժեշտություն չկա:
- Երբեք տոկոսներ մի՛ օգտագործեք փոքրաքանակ նմուշների հավաքածուի համար:

Բնագրի ձևավորման քայլեր

1. Պատրաստեք **գծապատկերներն ու աղյուսակները**:
2. Շարադրեք **մեթոդները**:
3. Մանրամասն ներկայացրեք **արդյունքները**:
4. Շարադրեք **քննարկումը**: Ամփոփեք արդյունքների և քննարկման բաժինները նախքան ներածությունը շարադրելը: Մա անհրաժեշտ է, քանի որ եթե քննարկումը բավարար չէ, ինչպե՞ս կարող եք ներածության բաժնում օբյեկտիվորեն ցույց տալ ձեր աշխատանքի գիտական արժեքը:
5. Հստակ շարադրեք **եզրակացությունը**:
6. Ներկայացրեք **համոզիչ ներածություն**:
7. Շարադրեք **ամփոփագիրը**:
8. Գրեք **հակիրճ և նկարագրական վերնագիր**:
9. ընտրեք **հիմնաբառերը**:
10. Շարադրեք **շնորհակալագիրը /կարիքի դեպքում/**:
11. Մանրամասն ներկայացրեք **հղումները**: